

1. Միջազգային վճարման հանձնարարականներով փոխանցումները «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ) կողմից իրականացվում են Բանկի կողմից սահմանված ձևաչափով «Վճարման հանձնարարագիր» փաստաթղթի հիման վրա, որի լրացման ժամանակ պետք է պահպանվի հետևյալ պարտադիր վավերապայմանները՝
  - 1.1. Փոխանցողի տվյալները (անուն, ազգանուն, իրավաբանական անձանց դեպքում՝ անվանումը, փոխանցողի Բանկում գործող բանկային հաշվի համարը (եթե փոխանցումը չի իրականացվում կանխիկ եղանակով), փոխանցողի հասցեն)
  - 1.2. Արժույթը,
  - 1.3. Գումարը՝ թվերով և տառերով,
  - 1.4. Շահառուի (գումարը ստացողի) բանկի անվանումը,
  - 1.5. Շահառուի (գումարը ստացողի) տվյալները (անուն, ազգանուն, իրավաբանական անձանց դեպքում՝ անվանումը, բանկային հաշիվը կամ IBAN կոդը, ինչպես նաև Բանկի կողմից պահանջվող այլ տվյալներ),
  - 1.6. Վճարման մանրամասները:
2. «Վճարման հանձնարարագիր» պարտադիր լրացման վավերապայման չի հանդիսանում միջնորդ բանկի տվյալները, այդ թվում՝ միջնորդ բանկի անվանումը:
3. Միջազգային վճարման հանձնարարականներով փոխանցումների իրականացման ժամանակ թղթակից բանկի ընտրությունը կատարվում է Բանկի կողմից ինքնուրույն, առանց հաճախորդին տեղյակ պահելու՝ Բանկի հետ համագործակցող թղթակից բանկերի ցանկից:
4. Միջազգային վճարման հանձնարարականներով փոխանցումներ իրականացնելիս Բանկը պատասխանատվություն չի կրում՝
  - 4.1. Թղթակից և(կամ) միջնորդ բանկերի, ինչպես նաև շահառուի բանկի կողմից միջնորդավճարներ գանձելու համար,
  - 4.2. Միջնորդ բանկերի կամ շահառուի բանկի գործողությունների հետ կապված գումարը շահառուի բանկային հաշվին սահմանված ժամկետից ուշ հաշվեգրվելու համար,
  - 4.3. Շահառուի բանկի կամ միջնորդ բանկերի կողմից գումարը հետ փոխանցելու, սառեցնելու, արգելափակելու, սանկցիաների կիրառման և այլ պատճառներով գումարը շահառուի բանկային հաշվին չհաշվեգրելու համար:
5. Միջազգային վճարման հանձնարարականներով փոխանցումների իրականացման ժամանակ, ինչպես փոխանցումն իրականացնելու պահին, այնպես էլ փոխանցումն իրականացնելուց հետո Բանկի կողմից կարող է պահանջվել լրացուցիչ պարզաբանումներ, տեղեկություններ, փաստաթղթեր, գումարի ծագման և փոխանցման հիմնավորման հետ կապված փաստաթղթեր և այլ տեղեկություններ: